

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԻՆ
ՆՎԻԴԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

2019թ. նոյեմբերի 20-ը

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Հուշարձանը նախատեսվում է իրականացնել բրոնզե հարթաքանդակի ձևաչափով, որը տեղադրվելու է Ջաքիյան, Բեյրութի և Գրիգոր Լուսավորիչ փողոցներով պարփակված Մանկական այգու՝ Գրիգոր Լուսավորիչ փողոցից դեպի Ջաքիան փողոց ձգվող ցանկապատի 22—23-րդ հենապատերի միջնամասում (համաձայն կից ներկայացված հատակագիծ-սխեմայի),
- Հուշարձանի գաղափարական հորինվածքը սահմանափակվելու է ձեռքերի և նշարվող մարմինների ուրվագծերի համադրությամբ՝ բացառելով ֆիգուրատիվ լուծումները և դիմանկարային նմանությունները,
- Հարթաքանդակը տեղադրվելու է բազալտե կրող հարթակի վրա, որը կարող է տարածվել դեպի այգու տարածքը ոչ ավելի, քան 120 սմ, ընդհանուր կոմպոզիցիայի մեջ նաև հնարավոր է ներառել ցայտադրյուր,
- Կրող հարթակի վերնամասում փորագրվելու է հուշարձանի անվանումը. «2008թ. մարտի 1-ի զոհերի հիշատակին»,
- Հուշարձանի գաղափարական հորինվածքից ելնելով ցանկապատի 22—23-րդ հենապատերի ապամոնտաժումը նախատեսվում պարագայում անհրաժեշտ է ներկայացնել կրող հարթակի միացումը ցանկապատի հետ,
- Հուշարձանը ճարտարապետական և գեղագիտական տեսանկյուններից պետք է ներդաշնակ և համահունչ լինի տվյալ միջավայրին, տարածության մեջ մասշտաբի առումով նպաստի ամբողջական ընկալմանը և չխաթարի հետիոտնի անարգել շարժմանը:

ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ

- ➡ Տարածքի գլխավոր հատակագիծը,
- ➡ Ճարտարապետական փովածքները Մ 1:50,
- ➡ Հուշարձանի կտրվածքը Մ 1:50,
- ➡ Գունավոր գծագրերը 3D ձևաչափով, այդ թվում՝ գիշերային լուսավորության առաջարկ,
- ➡ Բացատրագիրը /2 օրինակ /,
Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր, ներառյալ՝ մանրակերտը:

Բոլոր նյութերը ներկայացնել 60սմ x 80սմ ձևաչափով

ՄՐՅԱՆԱԿՆԵՐԸ

- ➡ Հանձնաժողովի կողմից լավագույնը ճանաչված գործի հեղինակը պարզևատրվում է 2 մլն դրամով, և գործն իրականացվում է:

ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- ➡ Մրցութային առաջակությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2020թ. հունվարի 15-ը հետևյալ հասցեյով. Արգիշտի փողոց հ. 1: Հեռախոս՝ 011 514 158:
- ➡ Գծագրերի աջ կողմում վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը՝ շրիֆտի բարձրությունը 15 մմ:
- ➡ Գործը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակը (հեղինակային կազմը և մասնակցության տոկոսը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը:

